



ՀՀ ԱՄՆ «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ  
RA MLSI STATE EMPLOYMENT SERVICE  
AGENCY



ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԴՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
USAID ARMENIA, SOCIAL PROTECTION SYSTEMS  
STRENGTHENING PROJECT

ՍՊՀՀ մամլո հաղորդագրություն # [16]

Երևան, Հայաստան  
14 հոկտեմբերի, 2008թ.

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

### *Նոր հնարավորություններ աշխատանք փնտրողների և գործատուների համար*

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) «Զբաղվածություն պետական ծառայություն» գործակալությունը (ԶՊԾԳ) կազմակերպում է **Աշխատանքի տոնավաճառ** Գյումրի քաղաքում, որը տեղի կունենա 2008թ. հոկտեմբերի 14-ին, Ժ. 11:00-16:00-ը «Արագած» մարզամշակութային կենտրոնում (Մ. Մկրտչյան 49, 2-րդ հարկ):

Տոնավաճառը կիրականացվի ԱՄՆ ՄՁԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ) ծրագրի աջակցությամբ և Շիրակի մրցունակության կենտրոնի, ՀՊՃՀ Գյումրիի մասնաճյուղի, «Ցայգ» ՍՊԸ-ի, «Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի» և Գյումրիի Տնտեսագիտական խորհրդատվական ընկերության հետ համագործակցությամբ: Ակնկալվում է, որ տոնավաճառին կմասնակցի շուրջ 41 գործատու և ավելի քան 1000 աշխատանք փնտրող, կներկայացվի մոտ 150 թափուր աշխատատեղ:

2008թ մայիս-հունիս ամիսներին ԶՊԾ գործակալությունն իրականացրել է 3 աշխատանքի տոնավաճառ Երևանում, Գորիսում և Աբովյանում՝ սոցիալական գործընկերների, տարբեր միջազգային կազմակերպությունների և բուհական կարիերայի կենտրոնների ակտիվ համագործակցությամբ: Արդյունքում մասնակցող գործատուների կողմից ներկայացված 600 թափուր աշխատատեղից 223-ը լրացվեց շուրջ երեք ամսում: Ըստ գնահատման թերթիկների՝ տոնավաճառին մասնակցած գործատուների մեծ մասը գերազանց է գնահատել տոնավաճառի դերը իրենց կազմակերպության կարգադրման կառավարման գործընթացում, իսկ մասնակցած աշխատանք փնտրողների կարծիքով տոնավաճառները զգալիորեն հեշտացնում են իրենց գործը և օգնում արագ գտնելու աշխատանք:

4-րդ տոնավաճառը կիրականացվի Գյումրիում՝ հաշվի առնելով մարզում գործազրկության բարձր մակարդակը և ՀՀ կառավարության գերակայությունները: 2008թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում աշխատանք փնտրողների թվաքանակը կազմում է շուրջ 91 հազ. մարդ (գործազրկության մակարդակը՝ 6.3%), որից 15.2 հազարը՝ Շիրակի մարզում, որտեղ պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը միջինից բարձր է և կազմում է 12.9%: Աշխատանքի տեղավորման լուրջ խնդիրներ ունեն երիտասարդները, որոնք չունենալով աշխատանքային փորձ և հմտություն՝ մերժվում են գործատուի կողմից: ԶՊԾԳ կողմից իրականացվող բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում 2009թ. ընթացքում պլանավորվել է իրականացնել 6 նմանատիպ աշխատանքի տոնավաճառ, որոնք զբաղվածության կարգավորման պետական քաղաքականության իրականացման գործողությունների մաս են կազմում, միջազգայնորեն գնահատվում են զբաղվածության ծառայությունների մատուցման արդյունավետ գործիք և օժանդակում են զբաղվածության հիմնախնդիրների հաղթահարմանը:

Աշխատանքի տոնավաճառի նպատակն է իրականացնել գործատուների և աշխատանք փնտրողների հանդիպումը, ինչպես նաև զարգացնել աշխատանքի որոնման

մշակույթը: Տոնավաճառի խնդիրներից է Շիրակի մարզի հանրությանը՝ հատկապես երիտասարդությանը, ներկայացնել մարզի աշխատաշուկայի պահանջարկն ու թափուր աշխատատեղերի առաջարկը, երիտասարդների ու հաշմանդամների զբաղվածության ներկա իրավիճակը, հիմնախնդիրներն ու սոցիալական երաշխիքները, ինչպես նաև բարձրացնել առավել արդիական մասնագիտությունների հանդեպ հետաքրքրությունը: Այն գործատուին կօգնի ավելի կարճ ժամանակահատվածում լրացնել թափուր աշխատատեղերը, իսկ աշխատանք փնտրողին՝ առավել լավ պատկերացում կազմել գործատուների պահանջների մասին և գտնել աշխատատեղ: Տոնավաճառի արդյունքում մասնակից գործատուները կունենան մասնագետների տվյալների բազա, կգովազդեն իրենց կազմակերպության ծառայությունները, իսկ աշխատանք փնտրողներն անմիջական կապեր կհաստատեն տարբեր գործատուների հետ: Տոնավաճառին մասնակցում է 41 գործատու, որոնք ներկայացնելու են մոտ 150 թափուր աշխատատեղ: